ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՄԱՅԻՍԻ 2025թվականի N 137-Ա

ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ « ՋՈՆ ԵՎ ՀԱՍՄԻԿ ՄԿՐՏԻՉՅԱՆՆԵՐ ԱՐԵՆԻԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ՈՐՈՇԱԿԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 24-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի՝ «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին» N 02-Ն հրամանով հաստատված կարգի 72-րդ կետը, «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի «Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2025 թվականի մայիսի 16-ի N 3 որոշումը,ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից տրված նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիրը (Սերիա Ա N1187, տրված՝ 14.02.2025 թ.) և մրցույթում հաղթող ճանաչված Արմինե Վարդանի Խաչատրյանի դիմումը.

1. Սույն թվականի մայիսի 21--ից Արմինե Վարդանի Խաչատրյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի «Ջոն և Հասմիկ Մկրտիչյաններ Արենիի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում՝ լուծելով 30 հուլիսի 2024 թվականի թիվ 01 որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. Արմինե Վարդանի Խաչատրյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր 5 (հինգ) տարի ժամկետով, գործող հավաստագրի ժամկետի երկարաձգման պայմանով:

3.Սույն որոշման 2-րդ կետով սահմանված հավաստագրի ժամկետը չերկարաձգելու դեպքում կնքված աշխատանքային պայմանագիրը կգործի մինչև 14.02.2030 թվականը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**